

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԻՍ Ի ՓԻԼԱԴԵԼՖԻԱ.

Սքուլքիլ (Schuylkill) և Ցէլառեր (Delaware) գետոց խառնուրդին վըրայ կանգնեց Ռիվլիէմ բէն, յամին 1682, ֆիլադելֆիա կամ Ֆիլատելֆիա քաղաքն, որ հիմա երկրորդ է մեծութեամբ և բազմամարդութեամբ, ու առաջին՝ վայելլութեամբ Ամերիկոյ Միացեալ-Նահանդաց քաղաքացը մէջ։ Մեզմէ հարիւր տարի առաջ բնակչաց թիւն էր 28042 հոգի, հիմա ունի 140000 տուն և 825504 բնակիւ։ Աշխարհիս զիխաւոր քաղաքաց հետ բաղդատելով, Ֆիլատելֆիա աւելի շատ տուն ունի համեմատութեամբ բնակչաց թույն։ վասն զի իւրաքանչիւր ոք, հարուստ կամ աղքատ, իր յատուկ բնակարանն ունի։

Աշխարհահամարն, որ 1870 թուականին կատարուեցաւ, քաղաքին և արուարձանաց մէջ գտնուած գործարաններուն նկատմամբ հետևեալ թիււերը տուաւ։ Գործարանն էին 8579 թուով, որոնք հազար միլիոն ֆռանդէն աւելի գրամագուտի մը կը ներկայացնեին։ գործածուած հում նիւթոց գինն արժեր էր 966 միլիոն ֆռանդ, և արտադրուած նիւթոց գինն՝ 1695 միլիոն ֆռանդ։ Գործաւորքն 100664 թուով, ի բաց առեալ 40760 կանաքը և 11129 տպայք, բնդուներ էին աւուրչէք 335 միլիոն ֆռանդ։ կային 2177

շարժիչ մեքենայք, որոնք կը ներկայացնեին 57305 ձիու ոյժ։

Փառաւորնաւահանգիստ մ'ունի Ցէլառերի վրայ, որ շատ բանուկ է և ուղղակի հաղորդակցութիւն ունի Լիվըրբուլի հետ բազմամիտ շոգենաւներով, որոնք շինուած են նոյն գետոյն ափանցը վրայ կանգնուած գործարաններուն մէջ։

Ֆիլատելֆիա 1873 թուականին ունէր 1450 քիլոմէզը հասարակաց ճամբայ, որուն կիսէն աւելին քարայտակ է և կազով լրաւաւորուած։ Քաղաքին մէջի երկամուզիթ և դրանեւէք 372 քիլոմէզը երկայնութիւն ունին, և 1874 թուականին փոխադրեր են 75,508335 ճամբորգ, և տուեր են 25 միլիոն ֆրանդէն աւելի մուտքի։

Եկեղեցեաց ու աղօթատեղեաց թիւն է 400, և հասարակաց գործոցներուն՝ 439, առանց համբելու կրթութեանց բազմաթիւ առանձնական տեղուանքը. քաղաքային (տուուրալ) գպրատունները տարին 100000 աշակերտէն աւելի կը լնդունին և 7 միլիոն ֆռանդ ծախս կու տան։

Խակ առողջապահութեան կողմանէ Ֆիլատելֆիա շատ նշանաւոր է իր գեղցիկ կիմային համար, ուր մեռելութիւնն աւելի նուազ է քանիթէ աշխարհիս ուրիշ մեծ քաղաքաց շատերուն

Այդ, չետաքրքրութեան համար դնենկը
հս մեռելութե պաշտօնական թիւերն
համեմատաբար 1873 թուականին.

Թիւ հունվար: Առ 1000 բաշի:

Լոնտրա	74792	22.3
Բարիգի	42531	23.2
Պրիփուէլ	4544	24.8
Գեռլին	29954	30.6
Վեննա	19809	32.7
Հուոմ	7452	29.3
Դուրին	5537	24.8
Կալկաթա	44782	25.3
Գոմպայի	15617	24.4
Նիւ-Եռոք	28490	27.9
Ֆիլատելֆիա	16736	20.29

Ֆէրմինդ փակարանն (Fairmount-Park) որ Ֆիլատելֆիլոյ հրասանյին արևմտեան կողմը կը լնինսայ, 1100 հեկտար տարածութիւն առնի. և մինչև հրամա արժեքը է քաղաքին 30 միլիոն ֆուան գէն աւելի, և տարուէ տարի անբաւ դրամ կը ծախուի անոր պահպանութեանն համար. Մէջն կ'անցնի Արութքիլ գետն, որուն առ ՚ի չեր ափունքը շատ գեղեցիկ տեսարաններ կը լներկայցունեն: Այս փակարանին մէջ կանգնուած է Արուեստահանդիին շէնքը գետոյն երեսէն 30 մէջը բարձր տափարակի մը վրայ, ուստի մէկ նայուածքով ամրող քաղաքն իր շրջագայթքը կը տեսնուի: Ֆիլատելֆիլոյ դիմաւոր փողոցներէն մէկն (Girard Avenue), որ 30 մէջը լայնութիւն առնի, քաղաքին կեդրնէն շիտակ կը հանէ Արուեստահանդիին զիմաւոր շէնքին մէջ, անցնենք Արուելի գետն երկաթէ կամրջով, որ մասնաւորապէս շինուած է Արուեստահանդէսը գլուրա մանելու համար, և արժեքը է 7½ միլիոն ֆու:

Այս մեծ Արուեստահանդիին հարկաւոր ծախքը հայթայթելու համար ամառապահանական ընկերութիւն մը կազմուեցաւ, յիսուն միլիոն ֆուանդ դրամագլուխով, բաժանորդութիւն բաժնուած 125 ֆուանդ իւրաքանչիւրը, առանց ուղարկի մասնակցելու Տէրու-

թեան: Սակայն չէր կրնար բոլորովին օտար մնալ Տէրութիւնն այսպիսի գործ առնաւթեան մը մէջ, ապա թէ ոչ կը պակսէր աղջային պարագէն. անոր համար կրանդ նախագահն անուանեց յանձնաժողով մը որուն մէջ Միութեան ամեն Նահանգներն ալ ներկայացուցիչ անին: Այս Յանձնաժողովն ընտրեց իրեն Նախագահն Հաուլի (Hawley) անունով զօրապետը, որուն խնամոցը տակ ստորագրութիւն բացուեցաւ բոլոր Միացեալ-Նահանգաց մէջ. Ֆիլատելֆիլոյ քաղաքն ու Բէնսիլվանիոյ Նահանգը ստորագրեցին միանդամայն 12½ միլիոն ֆուանդ, և քաղաքացիք ալ ստորագրեցին ճիշդ նոյն գումարը. որով ընկերական դրամագլուխոյն կէմն ստորագրուեցաւ այն Նահանգին մէջ, ուր տեղի պիտի ունենայ այս համաշխարհական Արուեստահանդէմն ՚ի յիշատակ գարագարձի ազատութեան Միացեալ-Նահանգաց. և այս բարի օրինակն յաջողից քիչ ժամանակուան մէջ խնդրեալ զումարն ամրուցցունելու:

Արուեստահանդիին շէնքը զիմաւորապէս հինգ մաս կը բաժնուի, որոնք բարորը միանդամայն առած աւելի ընդարձակի, աւելի բանաւոր և աւելի հանդիսատ են քան ինչ որ տեսնուած է մինչև հրման եղած համաշխարհական Արուեստահանդիիից մէջ. և ամերիկացի Յանձնաժողովը գլուխով գիտցաւ օգուած քաղելնախնթաց Արուեստահանդիիից փորձառութեամբ, և խորչիլ բատ մեծի մասին այն անպատեհութիւններէն որ տեսնուեցան Լոնտրայի, Բարիգի և Վենենայի հանրազգային մրցանաց ժամանակի:

Ֆէրմինդի փակարանին մէջ Արուեստահանդիիին համար որոշուած երկիրն 95 հեկտար տարածութիւն ունի, առանց հաշուելու ծիոց և արջաւոց համար պահուած տեղը. Վեննայի Արուեստահանդիիին զրաւած երկիրն, անառուն կենդանեաց համար արուած միջոցն ալ մէկ տեղ առնելով 105 հեկտար էր, և այլ չինուածները կը գրա-

էին 17 հեկտար, տալով արուեստա. կանաց 186000 քառակուսի մէդր մակ. արդակ մակերեղյթ մը: Ֆիլատելֆիոյ շինուածքները պիտի գրաւեն 20 հեկտար. և արուեստականաց պիտի մնայ աւելի քան 200000 քառակուսի մէդր մակերեղյթ, առանց հաշուելու այն օժանդակ շինուածքներն որ անտարակոյս պիտի պատրաստուին որպէս զի հարկ եղած ժամանակը գործածուին:

Առաջին շնչքն, ուր պիտի դրուին ձեռագործք, ուղղանկիւնի ձև ունի, որ արեկբեկն արևմտաց 630 մէդր երկայն է և հիւսիսէն հարաւ 140 մէդր լայն, խրաբանջիւր չորս անկիւնը մէյմէկ աշտարակ կանգնուած են 25 մէդր բարձրութեամբ: Մեծագործ մուտքեր հաստատուած են շնչքին ծայրերն ու կեդրոնը. Արևելեան դուռը վերապահեալ է այն այցելուաց որ կառօք կու գան, որ ծածկուած կամարակապի տակ վար կ'իջնեն: Հարաւայինն՝ երկաթուղիով եկաւորաց, Արևմտեանն՝ մէքենայից շնչքը կը հանէ, իսկ հիւսիսայինն՝ այն ծառուղիին ճակատը կ'ընկնի որ շիտակ գեղարուեստից Պատկերանոցը կը տանի:

Բովանդակ շնչքն երկաթ ու ապակի է, հիմունքը պատ, նման վեննայի շնչքին: Տանկիւն կատարը 21 ½ մէդր գետնէն բարձր է, կեդրոնական մասն աւելի բարձր է, և չորս կողմը մէյմէկ աշտարակ ունի 36 մէդր բարձրութեամբ: Խոտորնական երեք ճեմելիք շնչքին ներքին կողման ամրող կը դրաւեն: Կեդրոնական ճեմելիքն 36 մէդր լայնք ունի, խրաբանջիւր կողմն ալ մէյմէկ ճեմելիք, որ 80 մէդր լայնք ունին: Իսկ ապակէֆակից միջոցն եղած ճամբաներն ալ 9 մէդր լայնք ունին: Այս տարի ՚ի 11 մայիսի պիտի բացուի այս Արևեստահանդէսն:

Ի ցոյց գրաւած առարկաները տասը խումբ գասաւորուած են. ա. Նախնական հումքները, մետաղական, բուսական և կենդանական. բ. Նիւթք և արտադրութիւնք քիմիական հնարիք հանման կամ գուգաղրութեան պիտի գրաւուի այս

բաստուած. գ. Գործուածք, տարագը և զարգարանք անձանց. դ. Կահք և կարասիք բնակարանաց. ե. Գործիք, կազմածք, մեքենայք և հնարիք շինութեան. զ. Շարժիք և փոխանցութիւնք. է. Ոճք և նիւթք աճեցունելու և սփառելու մարդկան ծանօթութիւններ. ը. Հասարակաց շինուածք, շինուածապետութիւն. թ. Երկրացուցական և աշխարհագրական արուեստաք. ժ. Վասարիկայք որ կը յայտնեն բարւորելու եղած ջանքը մարդու բնական, մտաւորական և բարոյական պայմանքը:

Նիւթերը զասաւորուած են հատրւած հատուած այլ և այլ տարածութք դէպ ՚ի երկայնութիւն, իսկ ազգերն դէպ ՚ի լայնութիւն: Այնպէս որ եթէ մէկն ուզէ բազգատել մի և նոյն տեսակ նիւթերն աշխարհիս այլայլ կողմանէ եկած, չնչքին դէպ ՚ի երկայնութիւնը պէտք է երթայ այն նիւթոց սահմանուած բաժանմունքին: Իսկ եթէ կ'ուզէ միայն մի և նոյն երկրի մը արդիւնքը քննել, պէտք է դէպ ՚ի լայնք երթայ:

Երկրորդ շնչքն է մեքենայից, որ մինչև հիման այս մասնաւոր նպատակին համար կանգնուուած շինութեանց քան զամէնն աւելի ընդարձակ է, և առաջինն պալատան գծին վրայ կ'ընկնայ ու երեսքը միանգամայն կը չափեն 1165 մէդր երկայնութիւն: Մէքենայից սրահը (Machinery hall) 114 մէդր լայն է և 450 մէդր երկայն, և դէպ ՚ի հարաւայտելուած մ'ունի ջրաբաշխական մեքենայից համար, որուն երկայնքն է 63 և լայնքը 64 մէդր. ծածկուած մակերեսովն է 5.7 հեկտար: — Այս շնչքն ալ մէջն այլայլ բաժանմունք ունի, և կարևոր ջուրն ու շոգին իրի շարժիչ զօրութիւն, առատապէս պիտի մաստակարարուի մեքենայից:

Երրորդ շնչքն է գեղարուեստից Պատկերանոցն, որ անկործան պիտի պահուի Արևեստահանդէսը լիմինալէն ետքն իբր տեսակ մը պատմական պահարան կամ թանգարան (Memorial hall): Այս շնչքը բոլոր կրանիդէ է, մարմարին և երկաթ 120 մէդր եր-

կայն և 70 մէդր լայն . ծայրերն եղած խորանաձև շինուածոց (pavillon) մէջ արձանները պիտի դրուին : Բարձրաւանդակի մը վրայ շինուած է , առջևը կը տարածուին Աքուբբիլի ընթացքն և բովանդակ միջատելիքիա քաղաքը . ճարտարապետութեան սճը նոր է , գմբեթարդ , վրան հսկայած արձան մը Ամերիկայ՝ գետնէն Կ6 մէդր բարձր :

Չորրորդ ու հինգերորդ շինուածքն են անկագործական և երկրագործական չերմատունք (septet) , որոնք նոյն պէս ետքէն անկործան պիտի պահուին , և Ֆէրմընդ-Փակարանին զիսաւոր զարդերէն մէկը պիտի ըլլան . ասոնք ալ զիմացնին գեղեցիկ տեսարան ունին գետն ու քաղաքին մէկ մասը . շինուածքին ոճն է արարական (taureesque) երկուասաններորդ դարու , երկաթ և ապակի : Տնկոց չերմատունն ունի երկայնութիւն 130 մէդր և լայնութիւն 70 մէդր . շրջակայ հողերն ալ , ուր պատրաստուած են տնկելու ամեն տեսակ և ամեն երկրի բոյսեր , որոնք կրնան յաջողիլ ու առաջ գալ ազատ օդուն մէջ , յաւելուած մըն են այս տնկագործական արուեստահանդիսին :

Իսկ երկրագործական չերմատունը նորանշան շէնք մըն է , մէջը սրահներով , որոնց երկայնութիւնն է 270 մէդր և լայնութիւնն 45 մէդր . Նման վէննայի Ըրտեստահանդիսին ասոնք ալ ներքին բակեր ունին , և անմիջապէս յարակից փակարաններ , ախոռներ , գոմեր , և ուրիշ այլնայլ տեղուանք ձիոց , արջառուց համեր , և այլն :

Այս հինգ զիսաւոր շինուածոց չորս կողմը բազմաթիւ ուրիշ մանր շինութիւնք ալ պիտի կանգնուին , որոնք ամենը մէկտեղ կենդանութիւն և գեղեցիութիւն պիտի տան արուեստից Հանդիսարանին : Ասոնց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է այն շէնքն որ պիտի բովանդակէ մետաղական հարստութիւնները , զէնք , հագուստք և կահք Հնդիկներու , և այլն . Նոյնպէս ուրիշ շէնք մըն ալ որ պիտի ըլլայ նախադաշտափար (modèle) հիւանդանոյի ,

ուալով կատարեալ գաղափար ամեն կերպ զինուորական հիւանդանոցաց : Արդէն Անգղից կառավարութիւնը ձեռք զարկեր է կանգնելու երկեր շէնք . որոնց մէկը պիտի ծառայէ բնակութեան անդղիական վերակեցուին , երկրորդը՝ պաշտօնարանի , երրորդը՝ գործաւորաց և աշխատաւորաց : Գերմանացիք , Ճարտարական գերմանացիք , Նորուեկիացիք , Շվեյցարական գերմանացիք , Օսմանյացիք , Եգիպտական գերմանացիք , Անգլիացիք , Հասարակապետութեան քաղաքացիք առանձին հանգրուաններ ունին : Խոտիֆն , ինչպէս կըսուէր , Գահիրէ ամբողջ թաղ մը շինել պիտի տար մանրանկար . Լիպերիացիք մահմետական մզկիթ մը , քովս ալ եկեղեցիք մը . Օհիոյ , Նիւ-Ճարդէյ , Քանսաս , Միսսուրի , Մասաչուսէտս , Նեւառա և ինտիհանա նահանդներն պատրաստուեր էին մեծամեծ շինուածներ կանգնելու , առ որ ընդարձակ հող խնդրեր էին : Ընդարձակ հանգրուան մը վերապատճեն գատաւորաց (Jury) և յանձնաժողովոց համար հանդերձ ընդարձակ դահլիճով՝ հասարակաց ժողովներու և տպագրութեան պաշտօնիկցից համար . Երրորդ հանգրուան մ'ալ Ազգային լուսագրական ընկերակցութեան (National Photographic Association) համար : Այս խուռան շինուածոց վրայ պիտի աւելնան առանձնականաց շինութիւնքն , պանդոկներ , սրճանոցներ , և այլն , հրամանաւ կարգադիր Յանձնաժողովովոյն : Ասզին անդին աղբիւրներով արձաններով , այլեալ զարգերով պիտի զարդարուին . Գերմանացիք մահարձան մը պիտի կանգնենն 'ի յիշատակ Հումանուգի , ուրիշ մահարձան մըն ալ իտալացիք պիտի կանգնենն 'ի յիշատակ Գրիստափոր Գորոմպոսի , Երրորդ մ'ալ Ռիփթերսպունի (Witherspoon) պիտի կանգնենն երիցական աղանդաւորը , մեծագործ աղբիւր մը՝ պինեհատից կաթողիկ ընկերութիւնն պիտի կանգնէ , ուրիշ աղբիւր մ'ալ Հրէայք պիտի կանգնեն , և այլն :

Վերջապէս ընթերցողք կրնան ըմբռովնելթէ ինչ վառվառն, շարժուն ու միանգամայն մեծզի կերպարանք մը պիտի առնու այս արտաքոյ կարգի տեսակ մը քաղաքը, որ ուռճամփց բուսաբերութեամբ շրջապատած է, զարդարուն շինուածներով ճոխացած, աշխարհիս ամեն ազգաց գուներովն երգին վառուած, և որ մեծն է, կարելի է նայուածքով մը լնդգրկել մէկ կողմանէ վառաւոր հորիզոն մը, արծաթափայլ հոսանք մը և մեծագոյն քաղաքաց մէկը, միւս կողմանէ գարական ծառերով պսակուած բլուրներ։ Այս տեսարանին վրայ աւելցունելու է մարդկեղէն ծովուն մակընթացութիւնն ու տեղտոտթիւնը, ուր պիտի համախըմբուրին ամեն երկիշ նաև մեծահանճար մարդկե տեսանելու ու քննելու, և միանդամայն իրենց լուսաւոր դիտութեամբը նոր ճամբայ բաննու յառաջադիմութեան և նորանոր օգտից առ մարդիկ։ Յիրաւի անդիւտ տեսարան մը պիտի ըլլոյ և արժանի դիտողըթեան, որ անջնշերի պիտի տպաւորուի այն ամենուն վրայ որոնք բաղդ պիտի սւնենան ներկայ գտնուելու։

Այս մեծ դիւրութիւններն որ ունին Ամերիկացիք ճանազարհորդելու, անշուշտ պիտի հրաւիրեն բազմութիւն այցելուաց առ այս համաշխարհական արուեստահանդէսն, քան ինչ որ հրափրեցին եւրոպական արուեստահանդէսք Լոնտրայի, Բարիզի և վեննայի, որոնց վիճակագրական թիւերն արդէն հրասարակեր ենք բազմավիպիս նախ-

ընթաց Պրակին մէջ, (Էջ 66), սակայն հօս տեղ ալ կը կրկնենք այն թիւերը, սրբագրելով քանի մը պղտի անցդութիւնք։

Լոնտրայի մեծ Արուեստահանդէսն 1851 տարւոյն սկսաւ և մացիսի և տևեց 141 օր, 'ի բաց առեալ կիրակիները. այցելուք եղան 6,039495, և այցելութեան բոլորական դինն ելաւ 10,608060 ֆուանգ։

Բարիզու համաշխարհական Արուեստահանդէսն 1855 ամին բացուեցաւ 15 մայիսի, և տևեց 200 օր. այցելուք եղան 5,162330, և այցելութեան բոլորական գինն ելաւ 3,202475 ֆուանգ։

Լոնտրայի հանրազգային Արուեստահանդէսն 1862 թուականին բացուեցաւ և մայիսի և տևեց 171 օր, 'ի բաց առեալ կիրակիները. այցելուք եղան 6,211403 և այցելութեան բոլորական գինն ելաւ 10,213250 ֆուանգ։

Բարիզու համաշխարհական Արուեստահանդէսն 1867 թուոյն բացուեցաւ և ապրիլի և տևեց 217 օր. այցելուք եղան 8,805994, և այցելութեան բոլորական գինն ելաւ 10,5148375 ֆուանգ։

Իսկ վեննայի համաշխարհական Արուեստահանդէսն 1873 տարւոյն բացուեցաւ և մայիսի, և տևեց 186 օր այցելուք եղան 6,740500, և այցելութեան բոլորական դինն ելաւ 5,161950 ֆուանգ։

Ուստի վերցիշեալ եւրոպական մեծ Արուեստահանդիսից եղեր են ընդ ամենն 32,959119 այցելութիւնք, և տուեր են 39,704110 ֆուանգ՝ գին այցելութեան։